

# ՄԵՇ ՅՈԲԵԼԵԱՆԼ



Թերթերը ծանուցին թէ Յորելեանի առթիւ ըլլակիք հանդանակութեան գլխաւոր աղբիւրներէն մին պիտի ըլլան կեղր . Յանձախումբի կողմէ յատկապէս պատրաստուած քաջարտներու , Կոմիտաս վրդ.ի գոշնակած ձայնատետրերու և ՔԱՐԹ-ՓՕՍԹԱԼՆԵՐՈՒ վաճառումը : Տպարանական Յանձախումբին հրաւերով , ծանօթ նկարիչ Տիրան Էֆ . Չրաքեան «քարդ բոսթալ» ներուն համար պատրաստելու վրայ է գեղարուեստական գործ մը որ պիտի ներկայացնէ հայկական հին ոճով խորանազարդ մը՝ սիւներու վրայ նստած , մէջտեղի տեսարանը կը կաղմէ Օշական գիիւղ եկեղեցին ուր Ս . Սահակ ամփոփուած է : Խորանազարդի երկու անկիւններէն կախուած են Սահակ Մեսրոպի և ասացին տպագրիչ Մեղապարտ Յակոբի կենդանագիրները , իսկ խորանազարդին ճակատը՝ Մամուլի նախատիպ օրինակը : Զայնատետրի զին 5 ՄՌ և քառթ-բոսթալի (զին 1 դրշ.) իւրաքանչիւր օրինակ կնքուած պիտի ըլլայ կեղր . Յանձնաժողովի կնիքով , զեղծումներու առաջքը առնելու նըպատակով :

\* \* \* Մեծ Յորելեանին առթիւ , ծանօթ երգահան-դաշնակահար Յարութիւն էֆ . Սինանեան հեղինակած է զմայլելի մօրս Մեսրոպեան մնդեդի եւ Քայլերգ անուամբ , որմէ 100 օրինակ նուիրած է կեղր . Յանձնախումբին :

## ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ ԵՀԶ

Կէտիկ-Բաշայի մէջ յառաջիկայ Ազգ . Մեծ Յորելեանը շքեղապէս տօնելու համար՝ տմիսէ մը ի վեր կարգադիր երկսեռ երկու մասնախումբեր ժրագանորէն կ'աշխատին և արդէն գեղեցիկ ծրագիր մը պատրաստած են , որուն իւրականացումը այժմէն ապահոված են : Հանդէսին մէջ չորս բանախօսութիւններ պիտի ըլլան  $\frac{1}{4}$  ժամ տեւող . նոյնպէս բանաստեղծ Պ . Լեւոն էսածանեան գոերու գիւտին նուիրած իր գեղեցկահիւս մէկ քերթուածը պիտի արտասանէ : Կիներու և այրերու կողմէ ալ զանազան անակնկալներ տեղի պիտի ունենան : Վարժարանին և եկեղեցւոյ շրջափակը , ինչպէս նաև թաղիս հայ տուները պիտի շքեղազարդուին ու լուսազարդուին :

Մեծ տօնին ի յիշատակ՝ ժողովրդեան բաժնուելու համար , արդէն պատրաստուած են գեղեցկագիտական քարթեր և զարդասեղներ :

Հանդէսը նիւթապէս ալ արդիւնաւորելու համար ամէն միջոց խորհուած է : Մանրամասնութիւնք թուուցիկով ժողովրդեան պիտի հաղորդուին :

\* \* \* Հայ տառերու գիւտին հազարհինգնարիւրամեայ և հայ տպագրութեան չորեքդարեան կրկնակ յորելեանները՝ Սամաթիոյ մէջ ևս փայլուն կերպով տօնելու համար , կազմուած է յորելինական յանձնաժողով մը բաղկացեալ թաղին ու շրջակայ Նաոլը-զարու , Ալթը-Մէրմէր և էթմէյտան թաղերու մէջ գործող բոլոր պաշտօնական մարմիններու ու յարանուանութեանց ու զանազան ընկերակցութեանց ներկայացուցիչներէն : Յանձնաժողովը ձեռնարկած է արդէն գործի և սկսած է մեծ պատրաստութիւններ տեսնել , ազգային սոյն եղական տօնախմբութիւնները փայլուն և արդիւնաշատ ընծայելու համար :

Առաւոտուն հանդէսին եկեղեցական մասը պիտի տօնուի շքեղապէս և պիտի պատարագէ օներ . Գնէլ Սրբազն , երգեցողութիւնք պիտի կատարուին Սամաթիոյ , Նաոլը-Գարուի և Ալթը-Մէրմէրի զպրաց-դասերուն կողմէ : Իսկ ժողովրդական մասը տեղի պիտի ունենայ կէս օրէ վերջ «Ժողովուշդ» . Լսարանին մէջ և պիտի ունենայ խիստ ճոխ և հաճոյալից յայտագրով գիշերային բաժին մը ևս որուն ի մէջ այլոց պիտի մասնակցին թաղին «Մասիս» նուազախումբը և Ժ . Լ . Միութեան «Դողթան» երկսեռ երգչախումբը , նաև Ժ . Լ . Միութեան «Ազատ Բեմ» թատերախումբը : Հանդէսին մանրամասն յայտագիրը յառաջիկայ շաբաթ օր մասնաւորապէս պիտի հրատարակուի :

\* \* \* Սկիւտարի «Վոսփոր» մարմնամարդական Ակումբը 10 դրշ . կը նուիրէ ի նպաստ կրթական «Ֆօնտ»ի :